

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 րուբլի է, 6 րուբլի տարեկան 6 րուբլի

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում

Օտարաբարձրացիք դիմում են ուղղակի

Тифлис. Редакция «Мир»

Խմբագրատանը բաց է առևտուրը 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարությունները համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպեկ

„ՄԱՐՏԻ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878

ԿԵ ՀՐԱՏԱՐԱՆԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետևելով օրերից:
Լրագրի գեղը և պրոգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: ՄԵՐԱԿԻ տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարեկանը 6 րուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԵՆ և պ. ՓԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:
ԸՄԵՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպեկով հատր: Օտար քաղաքներից պետք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФ-ЛИС Редакция «Мир»:
Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ում համար ենք գրում:—Ներքին տեսու-
թիւն: Նամակ Ն.Ս.Ս.Ս.Ս.Ս.Ս. Ներքին լու-
րեր: Արտաքին տեսու-թիւն: Թիւրքիա:
Հոլանդիա, Արաբիոյ լուրեր:—Խառն լու-
րեր:— Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:
—Բանասիրական: Իտալիայի ազգային
ուսումնարանները:

ՈՒՄ ՀԱՄԱՐ ԵՆՔ ԳՐՈՒՄ

Մինչև այժմ մեր թիֆլիսի
հայոց ինտելեկտուալ շրջանը
կարող հաշտվել մի հայոց ամե-
նօրեայ լրագրի հրատարակման
գաղափարի հետ: Մեր լուսաւոր-
վածների մեծ մասը մեզ խելագար
է համարում և լուռ ու անտար-
բեր է մնում մեր աշխատանքների
անջև, միւս մասը արհամարհա-
կան ժպիտով է նայում մեր ջան-
քերի վրա, վերջապէս մի քանիս-
ն ապրիլի 1-ին 1878 թ. հունիսի 1-ին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ
Վերջին մամուլներն զբաղեցնում են մեր
ստոր և անլուսաւոր երկրներին ուղարկու-
թիւնը մամուլին: Այդ ընդհանուր մասնակ-
ցութեան մէջ անշուշտ հայերն էլ իրանց բաժինը
ունենան: Եւ ինչ է նշանակում:—այս
աշխարհին իրանց վերջին բարեւոյ տունը ներկայ
գարուս երկու ամենամեծ, նշանաւոր անձեր,
մէկը իրեն առաջին թագաւոր միացնելով իտա-
լիային, իսկ միւսը վերջին աշխարհական թագա-
ւոր—պապ Բայսոն Է, որ պապ Պիոս IX վեր-
ջին պապն էր, որը բացի հոգեւոր իշխանութե-
անից, նաև պապային երկրի թագաւոր էր: Ուրեմն
Պիոս IX-ի վախճանվելը ունի նաև մի մեծ պատ-
մական նշանակութիւն:—Քանի որ մեր այդ մաս-
նակցութիւնը զէպի երիտասարդ իտալիան դեռ
ստուած է, մենք օգտվում ենք այդ առիթով

ներ բարեկամաբար դիմում են
մեզ, խորհուրդ տալով մեզ որ
թողնենք մեր ապարդիւն աշ-
խատութիւնը:

Ում համար էք գրում, հա-
ցնում են մեզ ոմանք, միթէ կար-
ծում էք որ լուսաւորված, բար-
ձրագոյն ուսում ստացած թիֆ-
լիսցի հայր ժամանակ ունի թիֆ-
լիսեան և մայրաքաղաքների ու-
սաց լրագիրները ամեն օր կար-
դաւոյց յետոյ, կարդալ և «Մշակ»
լրագիրը: Միթէ դուք յանդգ-
նում էք մեզ լուսաւորել....

Լուսաւորվածներին լուսաւո-
րել ի հարկէ չէ կարելի և մենք
երբէք այդ տեսակ սարսփելի
յանդգնութիւն չենք ունեցել,
թէ (եթէ լրագրի միջոցով կա-
րելի է լուսաւորել) ամեն եր-

մեր ընթերցողների ուղարկութիւնը առ ժամանակ
խելի այն թաղման հանդէսներէ, ազգային յուզ-
մունքներից և այլն և այլն, և ընթերցողին տա-
նել մի ուրիշ չիղան, այն է՝ ինչ գրութեան մէջ
է Իտալիայի ազգային ուսումնասիրութիւնը: Նրա
այժման գրութիւնը, որը իսկոյն կը նկարագրենք,
մեզ անզգալի կերպով մտաբերել է տալիս նրա
վաղուայ գրութիւնը: Յայտնի է, որ եւրոպական
նոր երկրներից Իտալիան նա է, որ ամենից
առաջ հասաւ լուսաւորութեան բարձր աստիճա-
նին: Ահիցքը այնտեղ էր, որ զարգացան գրակա-
նութիւնը, գեղարուեստները, վաճառականու-
թիւնը և այլն: Ուրեմն ասի պարհն մարդկա-
յին գիտութեան, զարգացման կրիանշնորհան
օրօրոցը նախ իտալիան էր, որը իւր գրի վրա
անուցեց մեծ, նշանաւոր անձեր, թէ բանա-
ստեղծներ, թէ նկարիչներ, թէ մաթեմատիկոս-
ներ, թէ երաժիշտներ, թէ քաղաքական երևիկ
անձեր և թէ նշանաւոր վաճառականական մար-
դիկ,—միով բանիւ, նորածին եւրոպայի առաջի
զարգացած երկիրը—Իտալիան էր: Իսկ ինչ դու-
թեան մէջ է նա այսօր. նա ոչ առաջինն է,
ոչ երկրորդը, ոչ երրորդը, ոչ չորրորդը... նա՝
թէպէտ և շատերից բարձր, բայց դեռ նորա-
կերթ երկրներից մէկն է: Ամենից լաւ այդ կա-

կրում մարդիկ լուսաւորվում են
իրանց մայր եւ ի լեզուով հրա-
տարակիւղ լրագիրներով, և միայն
հայերը անհնարին և ծիծաղելի են
համարում որ հայը հայերէն
լեզուով հայերի համար գրի....

Լրագիրը մի երկրի մէջ միշտ
ընդունելութիւն կունենայ եթէ
նա համապատասխան լինի հասա-
րակութեան պահանջներին: Մեր
լրագրի ուղղութիւնը, խոստովա-
նում ենք, երբէք համապատաս-
խան չէ եղել մեր ինտելեկտուալ
պահանջներին, նախ որովհետեւ
հայերէն է գրվում, —իսկ մեր
ինտելեկտուալ չը գիտէ իր մայ-
րենի լեզուն, և երկրորդ որով-
հետեւ մենք երբէք չենք խօսել
քաղաքի սկանդալների, կրոնական
վրա, Պիւլչէֆսկու քաջագործու-
թիւնների վրա, բանկային ինտրի-
գանների վրա և այլն և այլն:

Նշմարիտ միթէ մեր հայ
բարձր ուսում ստացածներին
կամ մեր կրթված օրիորդնե-
րին կարող են հետաքրքրել հայոց
գիւղական ուսումնարանները, հա-
յոց հոգեւորականութեան գրու-
թիւնը, մայրենի լեզուի նշանա-
կութեան վրա գրած յօդուածները:
Միթէ նրանց կարող են գրա-
ւել այնպիսի խնդիրներ, ինչպէս
հայ գիւղական ժողովրդի գումա-
րատերերից հարստահարվելը, գիւ-
ղական փոխատու ընկերութիւն-
ների անհրաժեշտութեան հարցը,
ժողովրդի առողջապահութեան

խնդիրը, մեր երկրում կանոնաւոր
արդիւնաբերութեան հաստատելը,
մեր ոչնչացող անտառների պահ-
պանութեան վրա մշակված յո-
դուածները, կամ մեր երկրում
խելացի հիմքերի վրա կայացած
կաթնային տնտեսութեան մրտ-
ցնելը....

Ինչ փոյթ մեր ինտելեկտուա-
լային հայ ժողովրդի կարիքները,
ինչ գործ ունի նա հայոց արուես-
տաւոր և գիւղական ժողովրդի
հետ:

Իսկ «Մշակ» լրագիրը նրանց
վրա է խօսում, նրանց մասին է
հոգում, նա գիւղական կամ ա-
րուեստաւորների, մշակների, ու-
միկների լրագիր է, նա գաւա-
ռական թերթ է, և ոչ թէ
թիֆլիսի պէս մայրաքաղաքի լու-
սաւորված դասի ընթերցանու-
թեան համար ստեղծված լրագիր
է: Նա տեղական հարցերով է
զբաղվում, նա մայրաքաղաքի
թերթ է:

Կամ ինչ փոյթ մեր եսական,
միմիայն իրանց նիւթական շա-
հերի վրա մտածող լուսաւորված-
ների մեծ մասին որ մեր թիւր-
քիայի համադաւանները և ազ-
գակիցները տանջվում են և չար-
չարվում թիւրքաց լուծի տակ:
Մեր լուսաւորվածները ունեն
արդեօք ազգութիւն, կրօն,
եկեղեցի, մայր եւ ի լեզու:

Նրանցից մի քանիսները ե-
զուի տները կամ տարտիւֆ-

րող է հաստատել Իտալիայի ազգային ուսում-
նասիրութեան գրութիւնը, որի մասին մենք մի
չառ հետաքրքրական նամակ ենք գտնում Հռո-
մից գերմանական «Augsburg. Allg. Zeitung»
լրագրի վերջին համարներից մինի մէջ: Զիչեալ
լրագրի այդ նամակի հետ կուզենայինք մեր ըն-
թերցողներին ծանօթացնել, նա մանաւանդ որ
նա շատ թանկագին թանկանքներ է պարուսա-
կում իւր մէջ:

Ազգային լուսաւորութեան միջոցաւ հրատա-
րակած մի ստատիստիկը *) ցոյց է տալիս, որ
Իտալիայի ազգային ուսումնասիրութիւնը տիրու-
ղութեան մէջ է 1877 թ. Իտալիայի պարլա-
մենտից ընդունած «օրէնք ազգային ուսումնա-
րաններում պարտաւոր ուսման», պահանջում է, որ
իւրաքանչիւր երեխայ ութից մինչեւ տասը տա-
րեկան հասակը ուսումնարան յաճախէ, և յետոյ,
այն տեղերում, ուր որ երեխայի ուսումնա-
րաններ կան, մի տարի էլ այնտեղ մնայ: Այդ
օրէնքի մտցնելուց յետ, լուսաւորութեան միջոցա-
ւոր ազգային ուսումնարանների տեսուչներին մի

հարց առաջարկեց. քանի երեխաներ կան, որոնք
համապատասխան են նոր օրէնքին և քանիսը
—ոչ և նա, իրեն պատասխան, հետեւեալ ան-
սպասելի և տխուր թւանշաններ է ստացել:
Իտալիան ունի 1877 թ. 26,801,145 հոգի բնա-
կիչներ: Դրանից 2,635,338 օրէնքի համեմատ ու-
սումնասիրող երեխաներ: սակայն այդ թիւից
իրանց պարտաւորութիւնը կատարել են միմիայն
1,014,225 (այն է 692,085 տղաք և 412,140 աղ-
ջիկ), մնացեալ 1,571,113, ուրեմն կէսից շատ
առաւել ոչ մի ուսումնարան չեն յաճախել: Այդ
թիւերը այսպէս են բաժանվում: Իտալիայի գանա-
զան ընդլայնների մէջ 1) Հիւսիսային Իտալիան
9,346,557 հոգով ունի 468,399 ուսումնասիրող
տղաներ, որոնցից 325,664 յաճախում են և 142,735
ոչ մի ուսումնարան չեն գնում, և 446,610
ուսումնասիրող աղջիկներ, որոնցից 277,905 յա-
ճախում են, մնացեալ 168,705—ոչ 2) Միջին
Իտալիա 6,558,077 բնակիչներով ունի 336,227
ուս. տղաներ և 314,059 (ուսումնասիրող) աղ-
ջիկներ. առաջիններից յաճախում են 117,848
և 218,379 չեն յաճախում: Աղջիկներից ուսում-
նարան գնացողները են 83,524 և չը գնացող-
ները 230,535. 3) Հարավային Իտալիան 7,153,111
բնակիչներով ունի 372,188 ուս. տղաներ և

*) Իտալիայի բարձր իր ներդրումն ունի
նշանակում է թւանշաններով արտայայտած մի
օր և իցէ միտք:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ